


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
 Ե. ՓՈՐՈՍՅԱՆ
 Նամակ կամ որ եւ է
 գրութիւն պէտք է ուղղել առ
 Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ ջրագրի
 ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասիկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԻՆԵՐԻ	
Տարեկան մրակն	20
Վեցամսեայ »	12

E. TOROSSIAN
 Direc.-propr. du journal arménien
 ARCHAEOLOGIE
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՒԲԵՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԽԻԿ
 Եւ թղթատարի ծախքը
 Խմբագրութեան վրայ է:

Խմբագրութեան ուղղուած
 գրութիւնք եւ չ'եմ տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
 Կանխիկ վճարելի են

ԽՐԱԿԱՆ ԿԱՆ ԱԶԳ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժա-
 նորդներէն ջերմապէս կը խնդրուի որ բա-
 րեւանահին նախորդ տարիէն մնացեալ պար-
 տոց կցելով որիկն նստել իրենց ԵՐԿՐՈՐԴ
 Տարեկանի բաժանորդագիրը, եւ հարկ
 չը բողոյ մասնաւոր դիմումներու, որով
 նոր դժուարութիւն մը պիտի չըջան ԱՐՇԱ-
 ՆՈՅՍԻ արդէն բազմազարդ Տնօրինութեան:

ՌԱՄԻԿ ԵՒ ԱԶՆՈՒԱԿԱՆ

Ամենքնիս ալ այն համոզումն ունինք
 որ մենք զարգացեալ ազգ մ'ենք:
 Եւ անշուշտ այս առաւել կամ նուազ
 ապացուցուած համոզման գէժ մեղանչելու
 նպատակաւ չ'էր որ բարեկամ մը քանի մը
 օր առաջ, իրիկուն մը, Հայկական սըր-
 ճարանէն քանի մը քայլ հեռու, ինձ կը-
 սէր:

— Բեզի բան մը ըսե՛մ. ալ չ'եմ ուզեր
 ռամիկներու հետ գործ ունենալ և կ'եր-
 թամ ազնուականներուն քով:

Ո՛վ պիտի կրնայ մեղադրել իմ այդ
 բարեկամը այսպիսի բանաւոր պատճառա-
 բանութեանը համար: Ոչ ոք. ընդհա-
 կառակն, նա գովելի է իր բարձր զգա-
 ցուններով: Ռամիկի հետ գործ ունենալ.
 ինչ ստորութիւն: Ազնուականներու հետ
 գտնուելու ինքզինքը արժանի տեսնել.
 ինչ բարեբաղդութիւն: Զարգացած ըլ-
 լալու մի ապացոյցն է այդ:

Գէթ այսպէս պիտի խորհի ընթերցողը:
 Բայց ես, որ իմ բարեկամիս վերոյիշ-
 եալ վճռողական բառերուն շարժառիթը
 գիտեմ, և ինքզոյն աւելի տեղեակ ըլլա-
 լով գիտեմ նաև թէ ինչ կը հասկնայ իր
 ռամիկի և ազնուական բառերով. ես եր-
 բէք չ'եմ կրնար ընդունիլ այն անձին ըմ-
 բռնումը: Եւ ո՛չ միայն չ'եմ ընդունիր,
 այլ նաև կը պիտարակեմ:

Արդէն տեղ մը ըսած եմ որ բառերն
 իրենց բիրտ իմաստն ունին, ինչպէս մար-
 դիկ և տերութիւնք իրենց բիրտ ուժը:

Բարեկամս, որ իր վերոյիշեալ ուշա-
 գրաւ բառերով վերջացուց մեր խօսակցու-
 թիւնը, ռամիկ բառին բիրտ իմաստովը կը
 հասկնայ՝ արհեստաւորը, օրը օրին շահողը,
 կըրիկ գրամագլխէ զուրկ եղողը. իսկ ազ-
 նուական բառին բիրտ իմաստովը կը հաս-

կընայ. . . ինչ որ բացատրութեան անկա-
 բար է՝ այլ ևս:

Արդ բիրտը միշտ բիրտ է, և ազնիւը
 ազնիւ:

Եթէ բարեկամս կարող ըլլար ապա-
 ցուցանելու որ այդ երկու դասակարգի
 բաժնուած ազգայիններէն ամեն չ'ունենոր
 միշտ կոշտ է, միշտ անհաւատարիմ է,
 միշտ խաբեբայ է, միշտ նախանձոտ է,
 միշտ յափշտակիչ է, միշտ անընտել է,
 միշտ անգէտ է, և ամեն ունենոր, կամ
 այնպէս երեցողը միշտ փափկանկատ է,
 միշտ վստահելի է, միշտ ուղղամիտ է, միշտ
 բարետէր է, միշտ առատաձեռն է, միշտ
 հպելի է, միշտ գիտակից է եւ հրապարա-
 կաւ ներում կը խնդրեմ իրմէ այս տողե-
 րը գրած ըլլալուս համար, և իրեն կը մաս-
 նակցիմ երեքտասաներորդ դարուն կամ տե-
 րեպի յորեան օրերուն իր միջոցաւ վերա-
 կենդանացումը տօնելու համար:

Անշուշտ փափաքելի բան մ'է միշտ ազ-
 նուականներու հետ նստիլ ելլել, և ռամի-
 կին երեսն անգամ չ'տեսնել:

Բայց այս բառերուն արժէքը չ'կոր-
 մնցնելու համար պէտք է զանոնք յարա-
 փոփոխ վիճակի մը մէջ դնել. այսինքն
 պէտք է միջոցներ ձեռք առնել որպէսզի
 այս օրուն հարուստը, որ (ըստ վերոյիշեալ
 վերականգնացման) ազնուական կոչուելու
 իրաւունքն ունի, ձախող դէպքի մը պատ-
 ճառաւ վկայեալ ռամիկ չ'ըլլայ վաղը. և՛
 փոխադարձաբար՝ երէկուան արհեստաւորը,
 որ ի պաշտօնէ ռամիկ է, իւրմէլի երկա-
 թուղոյ մը ժպիտին շնորհիւ չ'յորջորջուի
 «Ազնուափայլ Տէր»:

Եւ մեր արժանապատուութիւնը ո՛րքան
 կը բարձրանայ երբ «մէկդի քաշուէ՛», պէ՛
 մարդ» պոռանք անձի մը, որուն առջև օր
 մ'առաջ կ'երկրպագէինք, իր ոսկիներուն
 համար, և երբ ձեռնամած ծնրադրելով
 «Տէր իմ, դու գիտես» սաղմոսերդնք ան-
 հատի մը, զոր երեկ կ'անդոսնէինք, որով
 հետեւ համեստօրէն իր օրապահիկը ճարելու
 ետեւէ էր. . . :

Այս այսպէս պէտք էր ըլլալ եթէ հե-
 տեւէինք մեր բարեկամին ըմբռնումին:
 Բայց եթէ այդ բառերուն իմաստաւորու-
 թեամբ զբաղինք, ռամիկը պիտի ներկա-
 յացնէ այն դասակարգը որ չ'խորհիր, չ'տը-
 րանաբանէր, բան մը՝ որ կամայ ակամայ
 ծնունդ կուտայ այն տգեղութեանց զոր քիչ
 առաջ թուեցինք, իսկ ազնուականը՝ այս
 դարուս մէջ՝ պէտք է նշանակէ ազնուա-
 սիրտ և հոմանիչ բառեր:

Արդ արհեստաւոր մը կրնայ ըլլալ ազ-

նուատիրտ, ինչպէս դրամատէր մը՝ տրամա-
 բանութենէ զուրկ:

Եթէ իմ բարեկամս՝ որ ուսեալ է և
 նոր սերունդին կը պատկանի՝ համախոհներ
 ունի, պէտք է ըսել որ մենք՝ իրապէս զար-
 գացած ըլլալու համար՝ դեռ շատ պէտք
 ունինք պանիր հացի:

ՔՆՆԱԴՏԱԿԱՆ

ՔՈՒՐԳԻԱ 1876 ԻՆ Ի ՎԵՐ
 ՏԵՏՐԱԿԻՆ ԱՌԹԻԻ
 ՀԵՂԻՆԱԿ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

(Շարունակութիւն թիւ 125 էն)
 ԶԻՆՒՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ. — Եր.
 19. Հատ. 5. — Առ այս չ'արժեք մեր ժամա-
 նակն զո՛ւնիլ ապացուցանելու համար թէ Օս-
 մանեան բանակն իրօք կրնայ հաւասարիլ զին-
 տրական կրթութեան կողմանէ քաղաքակրթեալ
 ազգաց բանակներու, թէ իրենց պարենքը,
 կազմուածքը եւ շարժման մէջ գրուելու դրու-
 թիւնները կը համապատասխանեն արդի պա-
 հանջներուն: Սակայն դատելով վարչութեանց
 միւս ճիւղերուն վիճակէն՝ դատելով զօրակիւնաց
 կողմանէ յաճախակի գործուած ոճիրներէն մէկ
 տարուան ընթացքի մէջ հարիւրէ աւելի իրենց
 մեծերու դէմ ըմբոստ արարքներու պատճառաւ
 վճռուած աստիճանազրկութեան դատապարտու-
 թիւնէն եւլն: Ներքի է նետեցնել թէ բոլոր այն
 Գերմանացի գլխաւորները չ'են զօրած փոխելու
 տաճկաց բնատուր, անկանոն եւ ըմբոստ ոգին՝
 եւ թէ մեծ պետութեան մը հետ պատերազմի ա-
 տեն միեւնոյն տեսարանները պիտի պարզուին
 ինչ որ տեղի ունեցաւ. (1876-78) Ռուսո-թուրք
 պատերազմի առնէն:

Սուլթանի դահակալութենէն առաջ արդէն
 պոլսոյ եւ կուսակալանիստ քաղաքներու մէջ
 կային զինուորական Ռիշթիյե վարժարաններ՝ ո-
 ռոնցմէ ելած շրջանաւարտները իհասիկ եւ անկէ
 Հարպիյեի բարձրագոյն վարժարանը կը մտնէին:
 Այս վարժարանաց մէջ՝ սակայն, արուած ուսու-
 մը ժամանակին պահանջմանց համաձայն չ'էր.
 որովհետեւ դասաւարակութեան արժանապատի-
 նակ մը որդեգրուած էր ոչ կը ծառայէր միայն
 ուսանողաց միտքերը ինձուցիլ կրօնական մոլե-
 ոսնդութիւններով ու նոսրապաշարուններով:
 Հեռացուր թուրք զօրաց միտքէն պատերազմի
 դաշտին մէջ մեռած պոռոնի նահատակ կոչուե-
 լու գաղափարը եւ այն դրախտոյնի պարգեւնե-
 րը՝ որ լիւրջի խօստացած է Սուհամէտ, իրենց
 Մարգարէն եւ պիտի տեսնէք թէ ո՛չ մի թուրք
 զինուոր պիտի ուզէ հեռանալ իւր տանիէն հայ-
 րենիքի ազատութեան համար կուռելու: Մէկդի
 թողունք զինուորական պիտոյից գէշ կարգադր-
 ման հետեւանօք պատահած հազար ու մէկ ան-
 տեղութիւնները՝ որոց թատր կը հանդիսանան
 միշտ Եգիպտոսի հող կազմող Բորթ-Սայիան ու
 Սուէզը, եւ զարմանալի է որ Պ. հեղինակը այս

ԱՐԵՎԵԼՈՅՍ

Վերջին քանակներուն այնպիսի կողմնակալութիւն մը վերջ գտնուեցաւ, երբ ինչ որ անոր հետ կապուած էր, անոր հետ կապուած էր, անոր հետ կապուած էր...

Համարիչէ հեծելագուններու կամ աւելի ճիշտ բառով Համարիչի Հրոսախուռներու կազմութեան գաղափարն յղացած էր Բեթրսպուրիի Օսմանեան դեսպան Շաքիր փաշան, Հայաստանի ջարդերուն կազմակերպիչն, որոյ գաղափարներուն այնչափ փառեցաւ Սուլթանը որ իր անունովը յորջորջեց այս նորակազմ հրոսախուռները կամ որ նոյնն է Համարիչիները: Ասոնք ի ըսկզբանէ քողի տակ եւ կառավարութիւնէն աստիճան մը ծածկարար կ'ընէին իրենց խփուածութիւններն, յետոյ սանձարձակ գործադրել սկսան իրենց գաղանային միտումներն՝ որովհետեւ Սուլթանի կառավարութիւնը պաշտօնապէս ճանչցած եւ իրաւունք տուած էր անոնց, հետեւանքն եղաւ Հայաստանի անուրի եւ քստմեկեղանի կոտորածը. գործ մեծաւ մասամբ Համարիչիներու եւ կանոնաւոր զօրքերու:

Սուլթանը սակայն ինչպէս կը հաստատեն թուրք եւ օստրալիացի անկեղծ դիւանագէտներ մեծ սխալ մը գործեց Համարիչիներու կազմութեան ձեւաւորման մէջ եւ հիմա ինքն է որ կը զղջայ, որովհետեւ իր իբր հեծելագունը կազմած Քիւրտ հրոսախուռներուն ձեւը տուած զէնքերը այսօր իւր զէնք կը վերանայ, շատ տեղեր այժմ քիւրտերը կը հակառակին զինուորական եւ քաղաքային իշխանութեանց եւ կը գործեն ինքնիշխան կերպով՝ սպաննելով եւ հարստանակելով նաեւ թուրքերն ալ:

Մովսէսի ՈՅԺ. — Եր. 11, Հատ. 6. — Կարծես մասնաւոր պարծանք մը կ'զգայ Պ. հեղինակը վերագրելու թուրքերոյ ինչ բանէ որ նա թափուր է: «Անգղիա», կ'ըսէ, «որ առջին կարգը կը բռնէ ծովային զօրութեան կողմանէ իր ունեցած 250 պատերազմական նաւերով, կը հիանայ կարծուածէն աւելի քիչ ատենի մէջ ձեռք բերուած Օսմանցոց նաւային յաջողութեան համար»: Մենք իրաւունք կուտայինք հեղինակին այս տողերուն՝ եթէ նա հեղինակութիւնը հրաջում թարգմանելու առանձնաշնորհն ունի:

Անգղիա ծովային առաջին ազգը՝ որ այսօր իւր իսկ նաւային զօրութիւնէն գոզո՛ կը ջանայ իտեալ կատարելութեան մը հասցնել զայն, պիտի հիանա՞յ (°) Օսմանեան նաւային զօրութեան վրայ: Այս ձախող բաղադրութիւնը ի հարկէ կը յիշեցնէ ընթերցողաց «Էրթողուլը» այդ տիպար նաւուն առասպելական ճամբորդութիւնը ճաբոնի ջուրերը՝ որոյ ճամբորդածները վերջ գտան անգուցններու մէջ ընկղմամբ. ա՛յն նաւուն որ իր մէջ կը պարունակէր ամբողջ Օսմանեան պետութեան նաւային զօրութեան նոր սերունդն:

Վերջին թուրք եւ Հելլեն պատերազմը ի վեր հանեց թէ Օսմանեան նաւատորմը ո՛չ միայն պատերազմելու անկարող վիճակի մէջ կը գտնուէ՝ այլ նոյն իսկ բաց ծովին մէջ խաղաղ օդով քալելու կարող չ'է. պատերազմի կրակ ու բոց ժայթքին ատեն հոչակաւոր նաւատորմէն մէկ նաւ իսկ չ'կրցաւ թողուլ զինքը այնչափ սիրով հիւրնակալող Ռուսիայի ջուրերը: Անշուշտ ասոր համար է որ կը հիանայ Անգղիա:

Շարունակելի) ՍՓԻՆԿՍ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՂՈՒՐ ՈՒ ԶՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆԸ (Շարունակութիւն թիւ 125 «Արշալոյս» էն)

ՋՈՒՐԻՆ ԲՆԱԽՕՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԿԱՆ ՊԱՊՈՒՆՆԵՐԸ

ՋՈՒՐԻՆ ԲՆԱԽՕՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԿԱՆ ՊԱՊՈՒՆՆԵՐԸ — Պաղ ջուր գործածուած ատեն իրենց անհոգութիւնը զփոխարան ջուրէն մը կ'ազդեցուի ներքէն, եւ ապա այդ ակներեւ նշանին կ'ընկերանան հերածեւ անօթներու կծ-

կազմ մորթի թորութիւնը համարուած անհոգութիւն կ'ընկերանան հերածեւ անօթներու կծուութիւնը, կազմութիւնը գտնուելու կ'ուսի մաքառել ցուրտին զէնք իր բնական ուժով, որոյ կը յաջորդեն ներհակ երեւոյթներ, ինչպէս. համատարած հանգստութիւն բովանդակ յօրինուածին մէջ, ախորժակի ջերմութիւն, մորթի վարդային գունաւորութիւն, արեան շրջանի կրակութիւն, խորունկ ու լայն շնչառութիւն եւ գոգորային կորով, որք համախմբօրէն կը կոչուին հակազդեցութիւն (ռեախիստ): Հակազդեցութեան շարժառիթն ու նպատակն է ջրազդեցութեան ու արեան շրջանի երեւոյթներուն բարելոջման, եւ գործարանաւոր մարմիններու փոխանակութեանց կատարելապէս լրման ի նպաստ եղած մասնաւոր ու եռանդուն գործունէութեան մը յանձնաձեւ, որոյ ազդեցութիւնները միանգամայն զօրութեանակն (սիւստիֆ) են տարբարանակն (շիւստիֆ) եւ, այսինքն կազմութիւնը (փոստիֆ) ու իւրացուցիչ (սիւստիֆիստ):

Պաղ ջուրին ազդեցութեան ներքեւ երակային ճնշումը մեծապէս կ'աւելնայ, եւ շնչերակային արեան թթուածնութիւնը զգալապէս կ'աճի: Պաղ ջուրով լողանքը թոքային փափուկաթիկներուն մէջ հաւաքուող անմաքուր օդին նորոգման եւ բնածխական թթուին (սիւստիֆիստ) արտաքսման յոյժ կը նպաստէ, նօթութեան զգացումը կը գրգռէ եւ մարտողական գործողութեան շարժումները կը կրկնապատկէ: Զօրաւոր միզեցուցիչ ալ է, ըստ որում մարմնոյ շրջապատային արեան շրջանը կ'ամփոփէ, եւ կը բազմապատկէ երակային ճնշումը:


ՏԱՔ ԶՈՒՐ. — Տաք ջուրին ազդակրութիւնը սաստիկ եւ պահ մը գրգռեալ տաժանելի կը դառնայ, սակայն ընդգիյթ կը բժշանայ մարմնակալ դիւրազգայութիւնը, եւ ջերմութեան կրկնի ազդեցութիւնը անզգալի կ'ըլլայ: Ծարժիկ երակները այս հանգամանաց ներքեւ նախ կը սեղմուին, եւ ապա կ'ընդլայնին անընդհատ ու յարստեւ: Կազմութեան մէջ մի անդամներուն վրայ գործածուած տաք ջուրը կը բարեխառնէ արեան ընդհանուր շրջանը եւ կ'երազէ ընթացքը: Տաք լողաւազանի մը մէջ մարդուն շնչառութիւնը հետզհետէ մակերեւոյթային կ'ըլլայ մինչեւ ջուրէն դուրս ելնելը, յորմէ յետոյ կը խորունկնայ ու կը կանոնաւորուի: Թուրքերու աւելի լաւ կը ծծեն թթուածինը եւ դիւրաւ կ'արձակեն բնածխական թթուին՝ տաք ջուրին ազդեցութեամբ: Մարմնոյ ջերմաստիճանը կը բարձրանայ եւ արեան ջերմաստիճանը ընդհանուր է. իսկ եթէ սոսկ տեղական է (ինչպէս ոտքի կամ ձեռքի բաղնիք մը), յայնժամ ներքին ջերմութիւնը կը նուազի եւ շրջապատինը կը բարձրանայ: Տաք բաղնիքները առատ քրտինք արտադրելով կը նուազեցնեն 20-400 կրամ մարմնոյն իսկական կշիռէն: Չափազանց տաք ջուրով լողանքները՝ մածուցանելով դնդերներուն սպիտակ, վերջնապէս կը փրճացնեն անոնց յատկութիւնները, եւ մերթ ալ յանկարծական կծկում յառաջ բերելով արգանդին ծոցը, վիժում կը պատճառեն յղութեան ատեն: Տաք ջուրը է նաեւ զերազանց ու դիւրամատչելի հակաբերանառն (անդիսիստիֆիկ) եւ հակաանիստական (անթիսիստիֆիկ) շատ մը պարազաններու մէջ:

Ի մի բան՝ մեր ըրած այս ուսումնասիրութիւնները մեզ հետազոտելու են բնական օրէնքներուն ու զօրութիւններուն: Մնտոյ արամախօսութիւններով թանկագին ու սահուն ժամանակին սպաննելու տեղ՝ ըզձանօք ջանանք լուսաւորուիլ բնական գիտութեանց վառվռուն ու ծաւալուն լոյսին:

Գիտնա՛նք օգտուել, պատե՛հ ժամուն՝ անուշ ու ծփծփուն ջուրէն եւ ջրաբուժութեան մատուցած աներեւակային ծառայութիւններէն, եւ անդարձաբար դարձունենք մեր ակնարկները, իբր բնածին բարածներ, զէպ բնական անմեղ գարմանները:

Վկայեալ երկտրաջրաբոյժ եւ մարձագետ Կ. ՈՒԶՈՒՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ԳՍՀԻՐԷՆ



ՀԱՆԳԻՍ ԱՐԺ.ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱՅ ՅՈՎՍԵՓԵԱՆԻ

Կիրակի երեկոյ ժամը 5 ին վախճանեցաւ տեղոյս աւագ քահանայ Արթ. Տէր Կարապետ հայրը ի հասակի 80 ամաց, որուն թաղումը կատարուեցաւ երկուշաբթի: Առաւօտեան ժամը 11 ին սկսաւ պատարագը, պատարագիչը Տէր Մամբրէ քահանայն էր. այս արարողութիւնը տեւեց մինչեւ ժամը 1 յետ միջօրէի, ներկայ էին երեք հոգի քահանայներ, մեր հինգ քահանայները եւ խուռն բազմութիւն այլեւայլ ազգերէ: Ապա սկսաւ օծման արարողութիւնը. հպտիք կարգաւորին, որոնց աւարտումին մօտ Յոյն վարդապետ մ'եկաւ երկու քահանայներով. այս քահանայներէն մինք քարոզ մը խօսեցաւ Արաբերէն լեզուաւ, զորուստելով յաւիտեանակալութիւնը եւ անգոսնելով մահը. Արաբերէնի արտասանութիւնը խիստ յստակ եւ մաքուր էր, բան մը որ խիստ հազուագիւտ է Յունաց մէջ. քարոզէն վերջ Յոյն վարդապետը աղօթք մը ըսաւ որը քարոզող քահանայ թարգմանաբար կրկնեց՝ որով վերջացաւ ասոնց ընթերցումը ու սկսան Հայերը: Ասոնցմէ վերջ Ռուսահայ նորեկ Տէր Սրապիոն քահանայն ախարարակաւ շնորհակալութիւնը յայտնելէ վերջ նախկին Արաբերէն քարոզը խօսողին, ցոյց տաւ քահանայութեան պաշտօնին դժուարութիւնները, միանգամայն վստիքութիւնը յայտաբարեց:

Արարողութեան աւարտումէն վերջ Արթ. Սրապիոն քահանայն դարձաւ շնորհակալութիւն յայտնեց Յոյն քարոզողին:

Դապաղը ճամբայ ելլելու պահուն մեր Հրեւոյժական եղբարց եկեղեցական դասէն Վեր. Հայր Ստեփանը եկաւ:

Թափորին կ'առաջնորդէին քսանի չափ զօրքեր Հարիւրապետով մը:

Թափորին մասնակցողները հետիտան մինչեւ Հազգանիցի առջեւ հասան, մերթ հայ եւ մերթ հպտի դպիրներու երգեցողութեամբ:

Այդ տեղ վերջին անգամ Տէր Մամբրէ Բահանայ իբրեւ Փոխ-Տեղապահ Տեղապահայոց, շնորհակալութիւն յայտնեց Յոյն եւ հպտի կը դերականներուն ինչպէս նաեւ Վերապ. Հայր Ստեփանին. այս վերջինը Ֆրանսերէն լեզուաւ քարոզ խօսող Յոյն քահանային ինչպէս նաեւ անոր ընկերներուն թարգմանեց Առաջնորդական փոխ-տեղապահին խօսքերը:

Այդ տեղէն բաժնուեցան յուղարկաւորք եւ կառքերու մէջ նստելով Մարմինայի Ազգ. գերեզմանատունը ուղղուեցան, հողին յանձնելու համար հանգուցեալ Տէր Կարապետ Բահանայն:

S. ՄՍՐՏԻՐՈՍԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՏԻԳՐԱՆ ԵՊԻՓԱՆԵԱՆ. ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԹՈՎՄԱՍ ԲՐՈՒՏԵԱՆ ԵՒ ՉԱԽԱԿՈՒՆԻ. ՏԻԱՐ ՄԿԻՏԻՉ ՀԱՄԱՐԶՈՒՄԵԱՆ. ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԵՂԻԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՉԱԽԱԿՈՒՆԻ. ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՕՀԱՆԵՏՄ ՎԱՐԳԱՆԵԱՆ ԵՒ ՉԱԽԱԿՈՒՆԻ, ԱՐՇԱԼՈՅԻ ՄԻՋՊՈՒՆԵԱՆ ԻՐԵՆԵՆԵՆԵՐԸ ԿՐ ԵՄԱՆԵՆ ԱՄԵՆ անոնց որոնք բարեհաճեցան ներկայ գտնուիլ:

ՏԻԿԻՆ ՆԱՐԴՈՒՅԻ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ յուղարկաւորութեան հանդիսին և իրենց

ցաւակցական զգացումներն արտայայտել , հանգուցելոյն , զաւակաց , քերց եղբօր , ազգականաց և բարեկամաց :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Աղէքսանդրիայէն կը գրեն մեզ .

ԱՆՅԵԱԼ ԿԻՐԱԿԻ օր Աղէքսանդրիոյ Աղ- քատահնամ-Բարեգործական Ընկերութեան Ընդհ. Ժողովը ի նիստ գումարուելով միա- ձայն և ձեռամբարձ քուէարկութեամբ Մայր -Գիւանի Փոխ-Ատենապետ ընտրեց ծանօթ վաճառական Տիար Զարեհ Սըվազը որ ե- ուանդոտ ծափերու մէջ , գնաց բազմիւ իր աթոռը .

Տիար Սըվազը սոյն ընտրութիւնը մեծ գոհունակութիւն պիտի պատճառէ ա- մեն անոնց որոնք իր ազգասիրական և մար- դասիրական զգացումներուն մօտէն ծանօթ են :

Տիար Փոխ-Ատենապետը շնորհակալու- թիւն յայտնելով իրեն եղած վստահութեան համար , խոստացաւ թատերական ներկայա- ցում մը կազմակերպել ի մօտոյ ի նպաստ Աղք. Ընկերութեան , որու զուտ հասոյթը երաշխաւորեց չորս հարիւր ոսկիի :

Նոյն ժողովին մէջ Գիւանի Առաջին Ա- տենապետ ընտրուեցաւ ծանօթ գրագէտ Տ. Տիգրան Կամարական որ նոյնքան ծանօթ գէմք մ'ընէ նաև քաղաքիս առևտրական հրապարակին վրայ :

Մեր շնորհաւորութիւնները սոյն յա- ջող ընտրութեանց համար :

ԺԱՆՏԱԽՏԻ վերջին երկու գէպքերուն պատճառաւ , որոնք պատահեցան Աղէք- սանդրիա , Կիպրոսի կառավարութիւնը տասն օրուան քարանձիխայի կ'ենթարկէ Եգիպ- տոսէ համոզները :

ԳՈՒՐՊԱՆ ՊԱՅՐԱՄԻՆ Թէև չորս ա- միս կայ տակաւին , բայց և այնպէս Մէք- քէի ուխտազնացութեան պատրաստուած թուրքերու մաս մը , հիմակուրնէ քաղաքս հասած է : Այս տարի Բաղադաւը կ'սկսի դեկտեմբերի 22 ին կամ 23 ին (Ն . Տ .) :

ԱՁԴ

Լսարան-Ընթերցատուն ընկերութեան Արտակարգ Ընդհ. Ժողովը , որ ծանուց- ուած էր ամսոյս 18 կիրակի օրուան հա- մար , չ'կրցաւ տեղի ունենալ անդամոց փոք- րամասնութիւն անգամ չ'կազմելուն պատ- ճառաւ : Յարգոյ անդամները կը կարծեն թերևս որ հաճոյք կ'զգանք գիրենք ան- հանգիստ ընելով . դա մեծ սխալ է . երբ գիրենք կը հրաւիրենք , պատճառն այն է որ անհրաժեշտ պէտք կ'զգանք իրենց ներ- կայութեան :

Արդ յետաձգուած ժողովը տեղի պի- տի ունենայ ամսոյս 22 ին հինգշաբթի իրի- կուն ժամը ութնին Պազար-Մուրուրի Ըն- թերցարանին մէջ , մի քիչ յաւելեալ օրա- կարգով , որուն հոն պիտի տեղեկանան յար- գոյ անդամները :

Կը յուսացուի որ այս անգամ մեր ըն- կերները չ'պիտի թերանան իրենց պարտա- կանութեան մէջ . և եթէ դարձեալ ներկայ չ'գտնուին , այլևս իրաւունք չ'են կրնար ունենալ որ և է զխոտրութեան այն որոշ- մանց համար , որոնք պիտի տրուին հինգ- շաբթի իրիկուն , ամսոյս 22 ին :

Ի Դիմաց Լսարան-Ընթերցատուն Ընկե- րութեան Մայր-Գիւանի

Ատենապետ Ա . ՊԱԼԵԱՆ

Գահիրէ 19 Նոյեմ . 1900

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Պ . ԳՐԻԿԵՆԻ ԳԻՏԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ . —

Պրիւքսէլէն հաղորդուած լուրի մը նայելով Տօք . Բէյց իմացուցած է Յրանսական և Պէլժիգական կառավարութիւններուն որ նախագահ Գրիկէր Բարիզէն հեռագիր մը պիտի ուղղէ Վիգթօրիա թագուհուն , ինդրելով որ թագուհին հրամայէ իր կա- ռավարութեան զինք նկատել իբր երկու Հանրապետութեանց լիազօր պատգամաւոր խաղաղութեան պայմանները կարգադրելու համար :

Եթէ Անգղիա մերժելով Պ . Գրիկէրը չ'նկատէ իբրև օրինաւոր պատգամաւոր եր- կու Հանրապետութեանց և չ'ընկալի անոր հետ խաղաղութեան պայմաններուն վրայ , այն առեւն կ'ըսեն Պօէրները՝ պիտի հաս- կցուի որ չ'է թէ Պրիկէրները յաղթելու , այլ զանոնք բնաջինջ ընելու համար Անգ- ղիան պատերազմի սկսաւ :

Նախագահին ապագայ ընթացքը թա- գուհուն պատասխանէն կախում պիտի ու- նենայ :

Կը վախցուի որ այդ պատասխանը շատ կ'երկարի և Պօէրները յուսախաբուին կար- ծելով թէ կրնան վստահ ըլլալ իրենց թըշ- նամիներուն վեհօգիտութեան :

ԲՕՐԹՈՒԿԱԼԻ Թագաւորը զօրաւորին (Անգղիոյ) հետ կը միանայ տկարը (Թը- րանսվաալը) բռնաբարելու համար . և թա- գուհին անկարը կը յափշտակէ հզօրագու- նին ճիրաններէն : Ն . Վ . Բօրթուկալի թա- գուհին իր այս գերազանցապէս մարդասի- րութեան փայլուն ապացոյցը տուաւ կատա- ղի ալիքներէն ազատելով երկու խեղճ և թշուառ ձկնորսներ , որոնք իրենց բազմա- դամ ընտանեաց օրապահիկը հանելու հա- մար ձկնորսութեան գացած , և՛ նաւակը վեր ի վայր տապալելով՝ Ովկէանի մէջ ըն- կղմած էին : Թագուհին Ամելի , որ քաջ լուրորդ մ'է , և այն միջոցին կը պտրտէր ծովափին վրայ , անմիջապէս ջուրը նետ- ուեցաւ , և իրարու ետևէ ազատեց երկու ձկնորսները : Կ'ըսուի թէ ժողովուրդը խան- դավառութեամբ կ'ողջունէ իր այս տիպար թագուհին . . . :

Կ . ՊԱԼԵԱՆ կը հաղորդուի որ Սուլթա- նը հրամայեց երեք մասնագէտներ բերել Գերմանիայէն , Թօբհանէի զինարանին մէջ թնդանօթներ շինելու համար :

ԲԻՉԱՐՏ ՖԷՐԻՍ անուն ամերիկացի մը պատասպարան մը հիմնարկեց . . . նախորդ միլիոններու համար : Ով որ առնուազն միլիոն մը ֆրանքի հարստութիւն մը կոր- մնցնելու բարեբաղդութիւնն ունեցած է , իրեն համար պատրաստ անկողին մը և . . . պատառ մը հաց ապահովապէս պիտի գտնէ յիշեալ բարեբարին հիմնարկած հաստատու- թեան մէջ : (Արհեստաւոր դասակարգին աչքը լոյս . վասնզի նա պիտի կրնայ իրեն եղած անարգանքին վրէժը լուծել , տար- ուէ տարի այդ անկեղանոցին խրկելով զոյգ մը գուլպայ , կամ ոչխարի վիստ մը զորոնք պիտի հագնին և պիտի ուտեն կարգ մը

ուսմկացած ազնուականներ . . . (տե՛ս Խմբագրականը) :

Կ . ՊԱԼԵԱՆ 8 Նոյեմ . Թուականով կը գրեն որ թուրք կառավարութիւնը ձերբա- կալեց ութը Պուլկարներ , որոնք կը կա- կածուին իբր Մակեդոնական յեղափոխա- կաններու ընկեր : Չանոնք ազատ ձգել տա- լու համար Պուլկարական Գործակալին կող- մէն եղած դիմումները ապարդիւն մնացին . Իրաւունքէն կը քաղենք հետեւեալները .

ԲԱՐԻՉԱԲՆԱԿ հայազգի բժիշկ Տօք . Գէմհանեան , Շահին Ֆրանսա գտնուած մի- շոցին Պարսկաստանի արտաքին գործոց նա- խարարը խիստ յաջողութեամբ դարմանած ըլլալուն , Աուիւթ - Արեգական պատուանշա- նին երկրորդ աստիճանը ստացած է :

ՊԱՏՐԻԱՐԻԻ միջոցաւ Մուշի առաջնոր- դարանը զրկուած 37 ոսկիի աւանդ գումար մը , որ պանդուխտներու ընտանեաց պիտի յանձնուէր , Մշեցի մը իւրացուցեր է , որով այդ խեղճ ընտանիքներուն զրկանք մը ե- դած է : Գաղ . Ժողովը վերջին նիստին որո- շեց պատրիարքարանի մետուէլէն 37 լիւրայ վճարել , և զեղծում գործող անձը դատի տալ :

ԼՈՒՄՈՒՄՆ Գ . ՀԱՆԵԼՈՒԿԻ

Արշալոյսի 125 թուով հրատարակուած հանելուկին լուծումն է ՓԱՅԼԱԿԸ , զոր լու- ծած և մեզ շրկած է Վանեցի աշաղուրկ Պ . Մարտիրոս Ոսկերչեան :

Միւսնոյն հանելուկը լուծած է նաև ի պէյն-էյ-Մուրէն նպարավաճառ ծիվան Հէ- քիմեան . բայց խոստացուած պարգևը կը շահի առաջին լուծողը :

ԾԱՆՈՒՑՈՒՄ

— 0 —

Տիար Տիգրան Եպիփանեան նկատելով որ օգափոխութեան պատճառաւ դեռ նոր փոխադրուած է ի Հէլուան , և թէ բարե- կաններէն ոմանք իրենց բնակարանը գտնե- լու դժուարութիւնը կրած են վերջին դըժ- բաղդ պարագային աւթիւ , ինդրած է մեզ- մէ ծանուցանել թէ՛ դիւրութեան համար իրեն այցելողները կրնան դիմել Հէլուանի կայարանը գտնուող Վալաւանի դեղարանը , և տեղեկութիւն ստանալ :

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ երկ- րորդ քանթերթեան պրակն , որ կը բաղ- կանայ 160-320 երկսիւն էջերէ և զար- դարուած է 91 գեղեցկատիպ պատկերնե- րով :

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ մէջ կը նը- կարագրուին .

Ա . — Մեր բոլոր նահանգները , գա- լաւանները , քաղաքները , աւանները , դիւղե- րը , լեռները , դաշտերը , լճերը , վանքե- րը , և այլ նշանաւոր և յիշատակաց ար- ժանաւոր տեղուանք : — Բ . — Յատուկ խը- նամքով ազգային աշխարհագրական պատ- մութիւնն , ինչպէս նաև հնախօսութիւնն , իրենց բաժինն ունին գործոյս մէջ , և իւ- րաքանչիւր նահանգաց , գաւառաց և քա- ղաքաց բերոց վրայ լիովին տեղեկութիւն կը տրուի : — Գ . — Մեր գաղթավայրերն ևս կը մտնեն Բառարանիս մէջ , և ըստ կարել-

ւոյն երկրագնդոյ վրայ գտնուող այն ամեն քաղաքներն յորս բնակած և յիշատակ մը թողած է հայութիւնն, և կամ տակաւին կը բնակի: — Դ. Չանաչան ձեռագրաց և շինուածոց յիշատակարանաց մէջ յիշուած աշխարհագրական անուններէն այն ամենը որ կրնան հետաքրքրական ըլլալ՝ կը ջանանք դուրս չ'ընդունուի: — Ե. Կը յիշատակենք նաև այն ամեն այլազգաբնակ գիւղերն, յորս կը գտնուին ինչ ինչ յիշատակարանք և բեկորք հայրենի հնութեանց: — Զ. — Նշանաւոր անուանց շատերու ստուգաբանութիւնն ալ յառաջ կը բերենք, և ումանց գիմաց ըստ տեղւոյն կը նշանակենք օտար ազգաց անուանակոչութիւնն՝ իրենց յատուկ գրերով: — Է. — Ի ստորև այն անուններուն, որոց վրայ աւելի ընդարձակօրէն գրած են ուրիշ ազգային և օտարազգի հեղինակներ, և կամ տուած են օգտակար տեղեկութիւններ, առանձին գրքերու կամ թերթերու մէջ, կը նշանակենք համառօտագրութեամբ նոյն գիրքն կամ թերթն և գլուխն կամ էջն:

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ այս երկրորդ պրակն հրատարակ հանած ժամանակ, կը փութանք յայտնելու մեր խորին շնորհակալութիւնները այն ամենայն ազգային բանասէրներու, լրագրաց և հանդէսներու յարգելի խմբագիրներուն՝ որոնք բարեյօժար կամօք փութացին թէ՛ առանձին նամակներով խրատուսել զմեզ և թէ՛ տպագրութեամբ գրախօսականներ կամ ազգեր հրատարակել:

Որովհետև շատեր փափաքեցան գիտնալ թէ քանի՛ պրակաց մէջ պիտի ամփոփուի ամբողջ Բառարանս, զիրենք գոհացնելու համար միջին հաշուով մը միայն կըրնանք շտել, թէ կարելի է լինի 10 էն 12 քսանթերթեան պրակ:

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ նորանոր պատկերաց լուսանկարներ ձեռք բերելու համար կը հանդիպինք բազմազիւսի գրծուարութեանց, որով երբեմն կ'ստիպուինք զանց ընել անուանի քաղաքի մը կամ գիւղի, եկեղեցւոյ մը կամ վանքի պատկերն: Այս մասին մեծապէս մեզ նպաստած պիտի լինին այն ազնիւ ազգայիններն, որոնք կամ արուեստիւ լուսանկարիչ լինելով և կամ Բնաշխարհի նուիրական սրբավայրերու և սքանչելի տեսարանաց լուսանկարներու սիրող և հաւաքիչ, բարեհաճին մեզ զրկել, վերստին ետ ընդունելու պայմանաւ, իրենց լուսանկարներէն մի մի օրինակ և կամ անոնց ցուցակն:

Ամեն գասակարգի անձանց գիւրամատչելի ընելու համար ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԸ, որոշած ենք շարունակաբար քսանական թերթերէ ձեւացած պրակներով հրատարակել զայն. և փոխանակ ամբողջ գործին բաժնեգիրը մէկ անգամով կանխագանձելու, ամեն անգամ երբ նոր պրակի մը հրատարակուին իմանան այն ժամանակ թող բարեհաճին բաժանորդք զրկել նոյն պրակին բաժնեգիրը:

Միևնոյն ժամանակ կը փութանք ծանուցանելու Բնաշխարհի սիրով տոչորող ամեն Հայու, թէ քիչ ժամանակի մէջ ունեցանք բազմաթիւ բաժանորդներ, որք օր աւուր բազմանալու վրայ են. ուստի Բնաշխարհիկ Բառարանը ունենալ փափաքողք փութալու են օգուտ քաղել այժմեան բարեյաջող պարագայէն պրակ պրակ գնելով Բնաշխարհիկ Բառարանը վասն զի,

հակառակ պարագային կարելի է որ սպառնին տպագրուած օրինակներն, և կամ գինն համեմատաբար բարձրանայ:

Բնաշխարհիկ Բառարանի իւրաքանչիւր պրակի գինն է, ճանապարհի ծախքը միասին, զուտ 3 ֆրանք:

Այն անձանց, որ կարենան մէկ անգամէն տար օրինակ գնել, մէկ օրինակ նուէր կը զրկուի:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ
Տեղիւնորին Հայկական Տպարանին
Վեներայ
ԻՏԱԼԻԱ

ՀՅԵՂԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 18 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

8745	9203	5385	6998	21	6
833	1649	1767	1936	2603	3332
4366	4719	5462	5924	6132	6299
6788	7016	7081	7908	8085	9314
		9822	9943	9996	

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ 18 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

2430	2912	7435	881	72	670
747	1163	1377	1402	1406	1496
1989	2150	2319	2573	2819	3414
3612	3723	4202	4519	4881	5408
5594	6009	6879	7193	7343	8612

Տպարանորին ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ա Ձ Դ

Եգիպտաբնակ ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով՝ այժմ Եգիպտոսի համար Արևելեան Մամուլ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան, որուն պէտք է զիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին:

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, դիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով:

Քաղաքէս հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ գումար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յԱզգ. վարժարանն ի Տարա-Էլ-Կինէն:

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՅ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՌՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԿ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ
Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատար իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընթերցելուն մէկ միլիար աւելի է:
Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԻԼ ԱՁԻՁԻ ՍԿԻՁԸ
Օտեսնիյե դեղատանին դիւնացի փողոցին մէջ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաշուղ և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Երջաքերակներ, Գիտեր, Հրախուսքեր, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոններ և այլ և այլ վասն օսականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագրութիւն և չափաւոր գին:
ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ:

ՄԻՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂԻՆՆԻՔԷԼ, կոթէն լարող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂԻՆ է սկսեալ մինչև 2500 ՂԻՆ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ. պատի և քօնսօրի բազմազան Բանտիլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Յօնօկրաֆներու:

Ա. ՊԱԼԵԱՆ
Մ Ա Թ Ի Լ Տ
(Գաղթականաց կեանքէն)
ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ
ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ
ՏՆՈՐԷՆ Լ. ԵՂԻԱՉԱՐԵԱՆՑ — ԲԱՌԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աջակցութեամբ եռանձայն և քառուձայն պատրաստուած սոյն հաւաքածոյին գինը փափաքողներն կամ բաժանորդացուիլ ուզողներն, կրնան գիտնել Արշալոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին:

ՍԷԼՎԱՃԵԱՆ ԼԱՅՑ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործապատար յԱզգ. քաղաքի: